ՊԱՏՐԻԱՐՔ ՍԵՐԳԻ

Ռուսաց ուղղափառ Եկեղեցու Սինոդը խորին վշտով հայտնում է, որ սուրբ Թվի Մայիսի 15-ին առավոտյան 6 ժ. 50 րոպեին ի Տեր հանգչավ Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարքը՝

ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՍԵՐԳԻՆ

ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՀԸ ՅԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ
ՅՑ-ԱՄՅԱ ՀԱՍԱԿՈՒՄ

ՊԱՏՐԻԱՐՔ ՍԵՐԳԻԻ ԹԱՂՈՒՄԸ

Սուրբ Թվի Մայիսի 18-ին Մոսկվայում պատրիարքական Աստվածահայտնության Մայր տաճարում տեղի ունեցավ Մոսկվայի և Համայն Ռուսիայի վախճանված Սրբազնագույն Պատրիարք Սերգիի հոգեհանդիստն ու թաղումը։

Պատրիարքի պերճ զարդարված դագաղը դրված էր տաճարում, ծածկված պատրիարքական պատմուճանով ու ծաղիկներով։

Հանգուցյալ Պատրիարքի հոգեհանգստին մասնակցում էին միտրոպոլիտներ Ալեքսին, Նիկոլայը, Իոհանը, 14 եպիսկոպոս և Մոսկվայի հոգևորականության ավելի քան 100 ներկայացուցիչ։

Պատրիարքի թաղմանը հավաքվել էր հավատացյալների, Աստվածահայտնության տաճարի և Մոսկվայի մյուս եկեղեցիների ծխականների հոծ կայական մասսա։

Թաղմանը ներկա էր ՍՍՌՄ ԺողկոմՍովետի ներկայացուցիչ Գ. Գ. ԿԱՐՊՈՎԸ։

Ցերեկվա ժամը մոտ 4-ին եկեղեցական սգո մեծ թափորը դագաղով և խաչվառներով պտտեց տաճարի շուրջը, որից հետո հենց այդտեղ՝ տաճարում կատարեց թաղումը։

(ՏԱՍՍ)

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ԿՈՂՄԻՑ

ՍՍՌ Միության Ժողովրդական Կոմիսարների Սովետը Մոսկվայի և Համայն Ռուսիայի Սրբազնագույն Պատրիարք ՄԵՐԳԻՍ մահվան կապակցությամբ իր խոր ցավակցությունն է հայտնել ռուսական ուղղափառ եկեղեցու Սրբազնագույն ՍԻՆՈԴԻՆ։

(«Սովետական Հայաստան»)